

1

Պողոս, Աստուծոյ ՚ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան,
2 յախտենական կեանքի յոյսով՝ որ անսուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ 3 – բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինձի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով – , 4 Տիտոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. ՚Չնորհք եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝ մեր Փրկիչէն:

ՏԻՏՈՒՄ ԳՈՐԾԸ ԿՐԵՏԷՒՄ ՄԵԶ

5 Ես ձգեցի քեզ Կրետէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երկցներ նշանակես ամէն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. 6 Եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անառակութեան համար ամբաստանուած կամ ըմբոստ չըլլան: 7 Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ ամօթալի շահախնդրութեան հետամուտ եղող, 8 հապա՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուլբ, ժուժկալ, 9 հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները: 10 Քանի որ շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մանաւանդ անոնք՝ որ թվատութենէն են: 11 Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուներ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ ամօթալի շահախնդրութեան համար: 12 Անոնցմէ մէկը՝ իրենց սեփական մարգարէն՝ ըսած է. «Կրետացիները միշտ ստախօս են, չար գազաններ, դատարկապորտներ»: 13 Այս վկայութիւնը ճշմարիտ է. ուստի սաստիկ կշտամբէ՛ զանոնք, որպէսզի առողջանան հաւատքին մէջ, 14 ուշադրութիւն չդարձնելով հրէական առասպեկներուն ու ճշմարտութենէն խոտորող մարդոց պատուէրներուն: 15 Մաքուրներուն՝ ամէն բան մաքուր է. բայց պիղծերուն եւ անհաւատներուն՝ ոչինչ մաքուր է, հապա անոնց միտքն ալ, խղճմտանքն ալ պղծուած են: 16 Կը դաւանին թէ կը ճանչնան Աստուած. բայց կ'ուրանան զայն իրենց գործերով, ըլլալով գարշելի եւ անհնազանդ, ու խոտելի՝ ամէն բարի գործի հանդէպ:

ՈՂՋԱՄԻՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

2

Իսկ դուն խօսէ՛ ինչ որ կը պատշաճի ողջամիտ վարդապետութեան: 2 Տարեցները թող ըլլան զգաստ, պատկառելի, խոհեմ, եւ ողջամիտ՝ հաւատքով, սիրով ու համբերութեամբ: 3 Տարեց կիներն ալ թող վարուին այնպէս՝ ինչպէս կը վայլէ սրբութեան, եւ ըլլան ո՛չ չարախօս, ո՛չ գինեմոլ, հապա՝ բարի բաներ սորվեցնող. 4 որպէսզի սորվեցնեն նեռահասակ կիներուն՝ սիրել իրենց ամուսինները, սիրել իրենց զաւակները, 5 եւ ըլլալ

ա Կամ՝ ստրուկ

բ Ոմանք՝ շնորհք, ողորմութիւն

շ Յուր.՝ շատ գինիի ծառայ եղած

ՊՈՂՈՒԻ ՆԱՄԱԿԸ ՏԻՏՈՒԻ

խոհեմ, մաքրակենցաղ, տնաշէն, բարեգործ, իրենց ամուսիններուն հպատակ, որ Աստուծոյ խօսքը չհայիոյուի: **6** Նոյնպէս յորդորէ՝ երիտասարդները որ ըլլան խոհեմ: **7** Ամէն բանի մէջ դուն քեզ ցոյց տուր իբր տիպար՝ բարի գործերու. վարդապետութեան մէջ՝ **ցոյց տուր** անեղծութիւն, պատկառանք, **8** ողջամիտ եւ անպարսաւելի խօսք, որպէսզի հակառակողը ամշնայ՝ մեր մասին չարախօսելիք ոչինչ ունենալով: **9** **Յորդորէ՝** ստրուկները՝ որ հպատակին իրենց բտէրերուն ու հաճելի ըլլան **անոնց՝** ամէն բանի մէջ. չհակաճառեն, **10** չխորեն, հապա բոլորովին բարի հաւատարմութիւն ցոյց տան, որպէսզի զարդարեն մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը՝ ամէն բանի մէջ: **11** Քանի որ Աստուծոյ փրկարար շնորհը երեւցաւ բոլոր մարդոց, **12** կրթելով մեզ՝ որ ուրանանք ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները, եւ ապրինք խոհեմութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ՝ այս ներկայ աշխարհին մէջ, **13** սպասելով այն երանելի յոյսին եւ մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին երեւումին: **14** Ան ընծայեց ինքզինք մեզի համար, որպէսզի ազատագրէ մեզ ամէն անօրէնութենէ, եւ մաքրելով՝ **ԾԱՀ** իր սեփական ժողովուրդը, նախանձախնդիր բարի գործերու: **15** Ըսէ՝ այս բաները, յորդորէ՝ ու կշտամբէ՝ ամբողջ հեղինակութեամբ: Ո՛չ մէկը թող արհամարհէ քեզ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՆՑԱԿԱՐՈՒԹԻՒՆ

3

Յիշեցո՞ւր անոնց՝ որ հպատակին պետութիւններուն եւ իշխանութիւններուն, անսան պետութեան, ու պատրաստ ըլլան ամէն բարի գործի. **2** ո՛չ մէկուն հայիոյեն, ըլլան ո՛չ թէ կռուազան, **հապա՝** ազնիւ, բոլորովին հեզութիւն ցոյց տալով ամէն մարդու: **3** Որովհետեւ մե՛նք ալ ժամանակին անմիտ էինք, անհնազանդ, մոլորեալ, ու կը ծառայէինք զանազան ցանկութիւններու եւ հաճոյքներու. կը վարուէինք չարամտութեամբ ու նախանձով, հակակրելի էինք եւ կ'ատէինք զիրար: **4** Բայց երբ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը երեւցան, **5** ան փրկեց մեզ – ո՛չ թէ մեր ըրած արդարութեան գործերով, հապա իր ողորմութեան համաձայն – աւազանին վերստին ծնունդով եւ Սուրբ Հոգիին նորոգութեամբ: **6** Զայն ճոխութեամբ թափեց մեր վրայ՝ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի միջոցով, **7** որպէսզի՝ անոր շնորհով արդարացած ըլլալով՝ ժառանգորդ դառնանք, յաւիտենական կեանքի յոյսին համաձայն: **8** Այս խօսքը վստահելի է, եւ կը փափաքիմ որ պնդես այս բաներուն վրայ, որպէսզի Աստուծոյ հաւատացողները ճիգ թափեն մատակարար ըլլալու բարի գործերու. այս բաները բարի են, ու մարդոց օգտակար: **9** Բայց հեռո՛ւ կեցիր յիմար վէճերէն, ազգաբանութիւններէն, հակառակութիւններէն եւ Օրէնքին շուրջ եղած կոհիներէն, որովհետեւ անօգուտ են ու փութ: **10** Հրաժարէ՝ հերձուածող մարդէն՝ առաջին եւ երկրորդ խրատէն ետք, **11** գիտնալով թէ այդպիսին խոտորած է ու կը մեղանչէ՝ դատապարտելով ինքզինք:

ՎԵՐՋԻՆ ՅՈՐԴՈՐՆԵՐ

12 Երբ Արտեման կամ Տիքիկոսը դրկեմ քեզի, փութա՛ գալ ինծի՝ Նիկոպոլիս, որովհետեւ որոշեցի հոն ձմերել: **13** Փութազանութեամբ ուղարկէ Զենաս օրինականը եւ Ապողոսը, **հոգ տանելով** որ ոչինչ պակախ անոնց: **14** Մերիններն ալ թող սորվին մատակարար ըլլալ բարի գործերու՝ հարկաւոր կարիքներու համար, որպէսզի անպտուղ ըլլան: **15** Կը բարեւեն քեզ բոլոր անոնք՝ որ ինծի հետ են. բարեւէ՛ հաւատքին մէջ մեզ

^բ **ՅուԱ.**՝ տիրակալներուն

ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՏԻՏՈՒՄ

սիրողները: Շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն: